

## ՆԱԽԱԳԾԻ ԺԱՄՆԱԿԱԳՈՒՅՑԸ

<p style="text-align: center;"><b>Ուսումնասիրությունների փուլ</b></p> <p><i>Ուսումնասիրությունների ամբողջ ընթացքը համակարգվում է մ/փ-ի կանոնակարգով:</i>  <i>Ուսումնասիրությունների ընթացակարգային հարցադրումները կարող են ուղղվել կազմկոմիտեին և մ/փ-ի կամավորական խմբի անդամներին:</i></p>	<p style="text-align: center;"><b>Օգոստոսի 16</b></p>
<p style="text-align: center;"><b>Մասնագիտական խորհրդատվություն</b></p> <p><i>Մրցույթ-փառատոնի մասնակիցները մասնագիտական խորհրդատվություն կստանան համապատասխան ոլորտի մասնագետների կողմից:</i></p>	<p style="text-align: center;"><b>Օգոստոսի 22-24</b></p>
<p style="text-align: center;"><b>Առցանց հարց ու պատասխանի փուլ</b></p> <p><i>Մրցույթ-փառատոնի մասնակիցները ուսումնասիրությունների ընթացքում առաջացած հարցերին ու խնդիրներին լուծում տալու համար սահմանված ժամանակահատվածում կստանան մասնագիտական խորհրդատվություն:</i></p>	<p style="text-align: center;"><b>Սեպտեմբերի 15-17</b></p>
<p style="text-align: center;"><b>Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ</b></p> <p><i>Ուսումնասիրությունների ընթացքում կազմված տեքստային բաղադրիչը, որը ստեղծվել է կազմկոմիտեի կողմից հաստատված ձևաչափին համաձայն, վերջնական տեսքով և բովանդակությամբ ներկայացվում է մասնագիտական հանձնաժողովին՝ մշակված, շտկված: Ներկայացվելուց հետո այն փոփոխության և վերամշակման ենթակա չէ: Նշված օրը «Google doc»-ում փակվում են փոփոխություններ անելու հնարավորությունները և վերջնական է համարվում այն տեսքը, որն առկա է այդ պահին:</i></p>	<p style="text-align: center;"><b>Սեպտեմբերի 25</b></p>



<p style="text-align: center;"><b>Աշխատանքների քննում</b></p> <p><i>Որպես վերջնարդյունք ներկայացված աշխատանքը տրվում է տվյալ թեմային համապատասխան նեղ մասնագիտական կազմի քննարկմանը, յուրաքանչյուր աշխատանք ունենալու է մասնագիտական գրավոր կարծիք և գնահատականի առաջարկ:</i></p>	<p style="text-align: center;"><b>Մեպտեմբերի 30</b></p>
<p style="text-align: center;"><b>Արդյունքների ամփոփում</b></p> <p><i>Արդյունքների ամփոփման, կատարած աշխատանքների բանավոր ներկայացման, մրցանակաբաշխության և փակման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա Հովի. Թումանյանի թանգարանի մատույցներում:</i></p>	<p style="text-align: center;"><b>Հոկտեմբերի 7-9</b></p>

